



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N 11-1/1904-12

06. 03. 2012 թ.

<Կապան-Էնեղժի> ՓԲԸ տնօրենի  
տեղակալ պարոն Զ.Աստվածատրյանին  
հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 1/11, բն. 11  
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետ  
պարոն Մ.Այվազյանին

Կից ուղարկվում է Ձեր 20.01.2012թ-ի թիվ 02-ԿԷ-12 գանգատի վերաբերյալ ՀՀ  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի  
գանգատարկման հանձնաժողովի 06.03.2012թ. թիվ 8/2 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/2

6 մարտի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 01.02.2012թ-ի նիստում քննության է առնվել <Կապան-Էներժի> ՓԲԸ 20.01.2012թ-ի թիվ 02-ԿԷ-12 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 20.12.2011թ. թիվ 1001282 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ-ին հանձնարարվել է կատարել 20.12.2011թ. թիվ 1001282 ստուգման ակտով առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ՝ նվազեցնելով 2010թ-ի օգոստոսի 7-ից հետո ընկած ժամանակահատվածի համար լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21.02.2012թ. թիվ 8 որոշման, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 20.12.2011թ. թիվ 1001282 ստուգման ակտի դեմ բերված գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Նշվեց նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ 15.09.2011թ. թիվ 1001282 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Կապան-Էներժի> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 20.12.2011թ-ին կազմվել է թիվ 1001282 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 4.863.155 դրամ:

Ստուգման ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերության կողմից 2010թ. տարվա և 2011թ. հունվար-հունիս ամիսների համար աշխատողների աշխատավարձից պակաս եկամտահարկ է հաշվարկվել համապատասխանաբար 1094572 դրամ և 556291 դրամ, ընդամենը 1650863 դրամ: Արդյունքում հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի դրույթները եկամտահարկի գծով ընդամենը գանձման է առաջադրվել 3023580 դրամ:

Ստուգման ակտի 15-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար ժամային դրույքաչափից բացի վճարվում է հավելում ժամային դրույքաչափի մեկուկես անգամից (150%) ոչ պակաս չափով: Ընկերության կողմից չեն կիրառվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84.1-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Ընկերությունը խախտելով <Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին> ՀՀ օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածների 1-ին կետի պահանջները պակաս է հաշվարկել և վճարել հավելում 8269493 դրամ (2010թ. 5488038 դրամ, 2011թ. 2781455 դրամ), որի սոցիալական վճարը համաձայն <Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի դրույքաչափերի կազմում է 667194 դրամ (2010թ. 442393 դրամ, 2011թ. 224801 դրամ):

Հիմք ընդունելով <Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները սոցիալական վճարների գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1238260 դրամ:

<Կապան-Էներժի> ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

2011 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1001282 հանձնարարագրի համաձայն Կապանի տարածքային հարկային տեսչությունը կատարել է ստուգում <Կապան-Էներժի> ՓԲԸ-ում, որի արդյունքում 2011թվականի դեկտեմբերի 13-ին ընկերությանն է ուղարկվել 01.01.2010-

30.06.2011թ.թ. ժամանակահատվածում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերաբերյալ ստուգման ակտի նախագծի օրինակը: <Կապան-էնեղժի> ՓԲԸ-ն առարկություն է հայտնել, սակայն անարդյունք: 2011թվականի դեկտեմբերի 20-ին ընկերությանն է հանձնվել թիվ 1001282 ակտը:

Ընկերությունը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովում քննարկել թիվ 1001282 ակտի 3-րդ և 15-րդ կետերը, քանի որ ընկերությունն առարկում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84.1-ի 2-րդ մասի չկիրառելու փաստը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի և ընկերության ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ընկերությունը գործունեությունը սկսել է իրականացնել 1997թ-ից: Ընկերությունն աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել է 2005-2006թ.թ. ընթացքում, որոնք հետագայում փոփոխության չեն ենթարկվել:

Ընկերության կողմից երեկոյան և գիշերային հերթափոխով աշխատող աշխակիցներին վճարվել են հավելումներ համապատասխանաբար 20 տոկոսի և 40 տոկոսի չափով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի (մինչև 2010թ-ի օգոստոսի 7-ը գործող խմբագրությամբ) համաձայն. <Արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով>:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի (2010թ-ի օգոստոսի 7-ից հետո գործող խմբագրությամբ) համաձայն. <Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ որ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով>:

Վերոգրյալից հետևում է, որ մինչև 2010թ-ի օգոստոսի 7 ընկած ժամանակահատվածի համար գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանված է եղել է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով (150%), իսկ 2010թ-ի օգոստոսի 7-ից հետո նձված հավելման չափը կազմել է որ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով:

Քննարկվող դեպքում ընկերությունը թե մինչև 2010թ-ի օգոստոսի 7 և թե դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար աշխատակիցներին վճարել է հավելում՝ ժամային դրույքաչափի 60 տոկոսի չափով:

Ստուգման ակտով գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար հավելումը ժամային դրույքաչափի մեկուկես անգամից պակաս հաշվարկելու համար լրացուցիչ պարտավորություններ են հաշվարկվել թե մինչև 2010թ-ի օգոստոսի 7 և թե դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար:

Հանձնաժողովը գտնում է, որ 2010թ-ի օգոստոսի 7-ից հետո ընկած ժամանակահատվածի համար լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, քանի որ վերոգրյալ օրենսդրական փոփոխությունիս հետո ևս ընկերությունը շարունակել է աշխատակիցներին վճարել է հավելում՝ ժամային դրույքաչափի 60 տոկոսի չափով, օրենսդրությամբ նախատեսված 30 տոկոսի փոխարեն:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Կապան-Էներժի> ՓԲԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 20.12.2011թ. թիվ 1001282 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ-ին՝ կատարել 20.12.2011թ. թիվ 1001282 ստուգման ակտով առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ՝ նվազեցնելով 2010թ-ի օգոստոսի 7-ից հետո ընկած ժամանակահատվածի համար լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ